ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12»
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան «01» հունիս 2018թ.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Պատվիրատու»** մի կողմից, և

«ԳՐԻՖ» ԱՀԻԳ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն, ի դեմս ընկերության տնօրեն Է. Սիմոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետ՝ **«Կատարող»** մյուս կողմից,

Յուրաքանչյուրն առանձին այսուհետ՝ **«Կողմ»,** իսկ երկուսը միասին հիշատակման դեպքում՝ **«Կողմեր»,** կնքեցին սույն պայմանագիրն, այսուհետ՝ **«Պայմանագիր»** հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

i. **«Պայմանագիր»** - Ծառայությունների մատուցման Պայմանագիր,

ii. **«Ծառայություններ»** - Կատարողի կողմից Պատվիրատուի պահանջով Պայմանագրի և Համաձայնագր(եր)ի շրջանակներում մատուցվող անվտանգության և պահնորդային ծառայությունները: Մատուցվող Ծառայությունների նկարագրությունը տրվում է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Տեխնիկական բնութագրում,

iii. **«Տեխնիկական բնութագիր»** - գնվող Ծառայությունների ամբողջական նկարագիր, որը բացառում է այլընտրանքային մեկնաբանությունն, ինչպես նաև գնվող Ծառայությունների անվանումը, Ծառայությունների հատկանիշը, չափման միավորը, քանակը, երաշխիքային ժամկետը, Ծառայությունների մատուցման վայրը, որակի, Ծառայությունների արդյունքների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը ներառող փաստաթուղթ (**Հավելված 1**),

iv. **«Գնման ժամանակացույց»** - Ծառայությունների մատուցման ժամանակահատված, որը ներառում է դրա սկիզբն ու ավարտը (**Հավելված 2**),

v. **«Ծառայությունների գին»** - այն գումարը, որը Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին Ծառայությունների պատշաճ, ամբողջական և լրիվ մատուցման համար, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ կիրառելի բոլոր հարկերը: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

vi. **«Վճարման ժամանակացույց»** - այն ժամկետը, որի ընթացքում Պատվիրատուն պարտավոր է վճարել Գինը: Մասնավորապես, վճարման ժամկետն է Ծառայությունների պատշաճ, ամբողջական և լրիվ մատուցման վրա հիմնված հանձնման-ընդունման ակտի/կատարողական ակտի հիման վրա ամսեկան վճար, մինչև տվյալ ամսվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում (**Հավելված 3**),

vii. **«Ակտ»** - Պայմանագրի մի մասի կատարման արդյունքի հանձնման-ընդունման վերաբերյալ կազմված, Կողմերի միջև ստորագրված փաստաթուղթ (**Հավելված 4**),

viii. «**Հանձնման-ընդունման արձանագրություն**» - Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ կազմված, Կողմերի միջև ստորագրված փաստաթուղթ (**Հավելված 5**),

ix. «**Պայմանագրի պայմաններ**» - Պայմանագրի առարկա, Վճարման ժամանակացույց, Պայմանագրի գին, որակ, Ծառայությունների մատուցման ժամկետ, երաշխիքային ժամկետ և այլն,

x. «**Ներկայացուցիչ**» - Պատվիրատուի և/կամ Կատարողի կողմից նշանակված և վերջիններիս կողմից լիազորված անձ, Պատվիրատուի ներկայացուցիչը Կատարողին (Կատարողի ներկայացուցչին) տալիս է Ծառայությունների մատուցման համապատասխան պատվերառաջադրանք, վերահսկում է վերջինիս գործունեությունը՝ Ծառայությունները պատվերառաջադրանքի շրջանակներում կատարելու մասով: Ներկայացուցիչը լիազորվում է Պատվիրատուի և/կամ Կատարողի (գլխավոր) տնօրենի կողմից տրված լիազորագրով:

ՀՈԴՎԱԾ 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում մատուցել Պայմանագրի Տեխնիկական բնութագրով սահմանված անվտանգության և պահնորդային ծառայություններ (այսուհետ՝ «**Ծառայություն**»), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայության գինը՝ համաձայն Գնման ժամանակացույցի:

2.2 Պայմանագրի առարկան սահմանափակվում է միայն Պայմանագրի սույն հոդվածում նշվածով և Տեխնիկական բնութագրի բովանդակությամբ, և սույն հոդվածի շրջանակներից դուրս կատարված ցանկացած այլ ծառայություն ենթակա չէ վճարման:

ՀՈԴՎԱԾ 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԵՎ/ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ) ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3.1 Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատվում է Պայմանագրի Տեխնիկական բնութագրում նշված յուրաքանչյուր ենթակետով նախատեսված Ծառայության մատուցման ավարտից հետո Պատվիրատուի և Կատարողի միջև Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությամբ՝ նշելով դրա կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ մատուցված Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը հավաստող փաստաթուղթն, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իրեն (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան

հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 (տասը)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում են ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

ՀՈԴՎԱԾ 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

4.1.1 Ցանկացած ժամանակ Ներկայացուցչի միջոցով վերահսկողություն իրականացնել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքի և որակի նկատմամբ՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

4.1.2 Կատարողի կողմից Պայմանագրում նշված ժամկետի խախտման դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանել Ծառայության մատուցման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրով նախատեսված տույժը:

4.1.3 Չընդունել մատուցված Ծառայությունը՝ ՀՀ օրենսդրության և Պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ սահմանելով թերությունների անհատույց վերացման կողմերի համար ընդունելի ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից 10 (տասը) օրվա ընթացքում վճարելու պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը:

4.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողը ժամանակին չի սկսում Ծառայության մատուցումը, որ Պայմանագրով նախատեսված ժամկետում ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին,

գ) Կատարողը խախտել է Գնման ժամանակացույցը:

4.2. Պատվիրատուն պարտավոր է՝

4.2.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունը (դրա արդյունքը), իսկ դրա՝ Պայմանագրի

Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներից շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ անհապաղ հայտնել Կատարողին:

4.2.3 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել Ծառայության մատուցման համար համապատասխան տարածք:

4.2.4 Պայմանագրով նախատեսված ժամկետում Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել Ծառայության գինը:

4.3 Կատարողն իրավունք ունի՝

4.3.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում մատուցված Ծառայության արդյունքը հանձնելու և Պատվիրատուի կողմից այն ընդունելու և հանձնման-ընդունման արձանագրությունը/կատարողական ակտը ստորագրելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված Ծառայության գինը:

4.3.2 Պատվիրատուի կողմից Վճարման ժամանակացույցով նախատեսված ժամկետների խախտման դեպքում պահանջել վճարել Ծառայության գինը և Պայմանագրով նախատեսված տույժը:

4.4 Կատարողը պարտավոր է՝

4.4.1 Կատարել մատուցվող Ծառայության վերաբերյալ Պատվիրատուի ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին:

4.4.2 Ծառայության արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան անհապաղ տեղեկացնել այն պահանջների և կանոնների մասին, եթե այպիսիք առկա են, որոնց պահպանումն անհրաժեշտ է Ծառայության արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

4.4.3 Ծառայության մատուցման ժամանակացույցով նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Ծառայության մատուցման նոր ժամկետ սահմանելու դեպքում, ապահովել Ծառայության մատուցումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել Պայմանագրով նախատեսված տույժը:

4.4.4 Պայմանագրով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել Պայմանագրով նախատեսված տուգանքը:

4.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

ՀՈԴՎԱԾ 5. ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 9.900.000 (ինը միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ: Կատարողը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

5.2 Ծառայությունների մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը, բացառությամբ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտները կամ կրած վնասներն են:

5.4 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի՝ Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ Վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և կարգով:

ՀՈԴՎԱԾ 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված Ծառայության որակի և Ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրի Հավելված 1-ում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ՝ կատարման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Կատարողն իրավունք ունի Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5 Պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարվող գումարների հետ:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

ՀՈԴՎԱԾ 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

ՀՈԴՎԱԾ 8. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.2 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ 15-օրյա ժամկետում: Նշված ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Հոդված 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

9.1 Պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման Պատվիրատուի նախաձեռնությամբ, նախապես, 10 (տասը) օր առաջ Կատարողին ծանուցելու միջոցով՝ պահպանելով Պայմանագրի 4.2 կետով նախատեսված իր պարտականությունը:

9.2 Պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման Կատարողի նախաձեռնությամբ, նախապես, 30 (երեսուն) օր առաջ Պատվիրատուին ծանուցելու միջոցով՝ չդադարեցնելով Պայմանագրի 4.4 կետով նախատեսված իր պարտականությունների կատարումը:

ՀՈԴՎԱԾ 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 6 ամիս ժամկետով (ամենօրյա, 24 ժամյա):

10.2 Պայմանագրի շրջանակներում ծանուցումները վավեր են, եթե դրանք ուղարկվել են Կողմերին՝ փոստով (Պայմանագրի 11-րդ հոդվածի նշված հասցեներով) կամ էլեկտրոնային փոստով և ստորագրված են Կողմերի (նրանց ներկայացուցիչների) կողմից:

Կողմերը պարտավոր են միմյանց հայտնել Պայմանագրի գործողության ընթացքում իրենց հասցեն փոխելու մասին և նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցումներն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված:

10.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Համաձայնագիր կնքելու միջոցով: Համաձայնագրերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

10.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի Կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով:

10.5 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Սույն կետով սահմանված ծանուցումն ինտերնետային կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից Կատարողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատշաճ ծանուցված:

10.6 Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

10.7 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

10.8 Պայմանագիրը բաղկացած է հետևյալ հավելվածներից.

Հավելված 1 – Տեխնիկական բնութագիր,

Հավելված 2 – Գնման ժամանակացույց,

Հավելված 3 – Վճարման ժամանակացույց,

Հավելված 4 – Պայմանագրի մի մասի կատարման արդյունքի հանձնման-ընդունման ԱԿՏ,

Հավելված 5 – Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ Հանձնման-ընդունման ակտ:

ՀՈԴՎԱԾ 11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	**«ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Նորք-Մարաշ թղմ., Կորյունի փող., 7/1 շ., 29 բն.
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ	«Արցախբանկ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 22317000169500
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 01574226
_____ **Ա. Հովակիմյան**	_____ **Է. Սիմոնյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
« 01 » հունիս 2018 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀՇՁԲ-18/12» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ծառայություն /անվտանգության և պահնորդային ծառայության ձեռքբերում/	
Տեխնիկական բնութագիրը	Ընդհանուր գինը
Պատվիրատուի ք. Երևան, Զոր. Անդրանիկի 1 հասցեի օբյեկտները, տարածքներն իրենց գլխավոր մասնաշենքերով պետք է ունենան 24 ժամյա, շուրջօրյա ծառայություն (շաբաթվա բոլոր օրերին ներառյալ հանգստյան և տոնական օրերին): Կատարողը ծառայությունների մատուցման ընթացքում կազմակերպվում է և ապահովում է օբյեկտի, տարածքների, ինչպես նաև պատվիրատուի կողմից կատարողի պահպանությանը հանձնված ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պահպանությունը: Գողության կամ այլ վտանգավոր արարքով պատվիրատուին (հասցված) պատճառված նյութական վնասի չափը որոշելու ժամանակ կատարողը մասնակցում է ապրանքանյութական արժեքների հաշվարկմանը: Կատարող Ընկերությունը՝ • նյութական պատասխանատվություն է կրում գողությամբ կամ հանրորեն վտանգավոր այլ արարքով պատվիրատուին (հասցված) պատճառված վնասի դեպքում, եթե վնասն առաջացել է կատարողի կողմից պայմանագրի պայմանների խախտման արդյունքում: • պարտավոր է ցերեկային հերթափոխի ընթացքում իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն, կանխել ապրանքանյութական արժեքների անօրինական տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքում (հրդեհ, ահաբեկչություն, երկրաշարժ և այլն): Ստորև ներկայացվում է վերահսկողության տակ գտնվող մասնաշենքի և տարածքների մակերեսները, մուտքերը և ծառայության ժամանակամիջոցը. ա/Վարչական շենք թիվ 1-2 մուտք 1365 մ^2-1x 24 ժամյա և աշխատանքային օրերին 1x8 ժամյա անցագրային կետի հերթապահություն բ/ Վարչական շենք թիվ 2-1 մուտք 504 մ^2- 24 ժամյա գ/Ավտոտրանսպորտային միջոցների ելքի և 1 մուտք 1x 24 ժամյա դ/ Ավտոտնակներ 51 հատ 1473 մ^2-շրջայց ե/ ՓԲԸ ընդհանուր մակերեսը 5000մ^2-շրջայց Շրջայցը պետք է կատարվի Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված կարգով: • պարտավոր է աշխատակիցներին ապահովել համապատասխան և <<ԲԷՑ>>տարբերանշաններով արտահագուստներով • կարող է կրել օրենքով թույլատրվող հատուկ միջոցներ • պարտավոր է ապահովել ստացիոնար կապի միջոցներով կառավարման կենտրոնի, պահպանվող տարածքների ու պարեկային ավտոմեքենաների միջև օպերատիվ կապը: • պահպանության ենթակա բոլոր պահակակետերում ապահովել բուժօգնության դեղատուփերով: • պարտավորվում է բոլոր մասնաշենքերը, տարածքում գտնվող պահեստներն ու ավտոտնակները սարքավորել պահնորդի շարժման հետագիծը վերահսկող տեխնիկական միջոցներով (չիպերով): • պետք է կառավարման կենտրոնում ունենա ահազանգման GSM կապի միջոցով տագնապի ազդանշան ընդունելու համակարգեր: • պարտավոր է ծառայությունը իրականացնող անձնակազմը կազմավորելիս նախապատվությունը տալ <<ԲԷՑ>> ՓԲԸ պահակային ծառայության նշված օբյեկտը պահպանող նախկին անձնակազմին, ովքեր կանցնեն համապատասխան մասնագիտական ուսուցման դասընթացներ և կհանձնեն որակավորման քննություններ՝ պահպանելով նրանց նախկին միջին աշխատավարձը: • պարտավորվում է հերթափոխի ընթացքում իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն, կանխել աչքին տեսանելի գույքի և սարքավորումների չարտոնված տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում/հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն/:	9.900.000 << դրամ

պարտավոր է հերթափոխի ընթացքում ապահովել իր կողմից պահպանվող տարածքում շրջիկ խմբի առկայությունը: Պահնորդները պետք է անցած լինեն որակավորման դասընթացներ համապատասխան լիցենզավորված ուսումնական հաստատությունում և հանձնել որակավորման քննություն ՀՀ Ոստիկանության պահնորդների որակավորումը ստուգող հանձնաժողովում ստանալով համապատասխան վկայական:	
Այլ պայմաններ ծառայության մատուցման վայրը	ՀՀ, ք. Երևան, Զորավար Անդրանիկի 1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

_____ **Ա. Հովակիմյան**
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Նորք-Մարաշ թղմ., Կորյունի փող., 7/1 շ., 29 բն.
«Արցախբանկ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
Հ/Հ 22317000169500
ՀՎՀՀ 01574226

_____ **Է. Սիմոնյան**
(ստորագրություն)

Հավելված N 2
«01» հունվար 2018 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրով Պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայությունների մատուցման ժամկետը	
Ծառայությունների մատուցման սկիզբը	**Ծառայությունների մատուցման ավարտը**
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	6 ամիս

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

_____ **Ա. Հովակիմյան**
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Նորք-Մարաշ թղմ., Կորյունի փող., 7/1 շ., 29 բն.
«Արցախբանկ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
Հ/Հ 22317000169500
ՀՎՀՀ 01574226

_____ **Է. Սիմոնյան**
(ստորագրություն)

Հավելված N 3
«01» հունիս 2018 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրովրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Կատարողական ակտի հիման վրա ամսեկան վճար, մինչև տվյալ ամսվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

_____ **Ա. Հովակիմյան**
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Նորք-Մարաշ թղմ., Կորյունի փող., 7/1 շ., 29 բն.
«Արցախբանկ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
Հ/Հ 22317000169500
ՀՎՀՀ 01574226

_____ **Է. Սիմոնյան**
(ստորագրություն)

Հավելված 4
« » 20 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրով Պայմանագրի

ԱԿՏ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույնով արձանագրվում է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018 թ. _____ ին կնքված N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12 Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայության անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
« » 20 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրով Պայմանագրի

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № ____

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու
փաստը հաստատելու վերաբերյալ

ք. Երևան «___» _____ **2018 թ.**

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Պատվիրատու»** մի կողմից, և **«ԳՐԻՖ» ԱՀԻԳ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն**, ի դեմս ընկերության տնօրեն Է. Սիմոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Կատարող»** մյուս կողմից,

Յուրաքանչյուրն առանձին այսուհետ **«Կողմ»,** իսկ երկուսը միասին այսուհետ՝ **«Կողմեր»,** հիմք ընդունելով № **«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12»** անվտանգության և պահնորդային ծառայությունների մատուցման պայմանագիրը, կնքեցին սույն Հանձնման-ընդունման արձանագրությունը՝ հետևյալի մասին.

(1) Կատարողը հանձնում է, իսկ Պատվիրատուն ընդունում թիվ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրով Պայմանագրով նախատեսված **Անվտանգության և պահնորդային ծառայությունները**:

(2) Պատվիրատուն հավաստում է, որ Հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահին Ծառայությունները կատարված են Պայմանագրի բոլոր պայմանների պահպանմամբ և որ Պատվիրատուն չունի որևէ պահանջ՝ կապված Ծառայությունների կատարման հետ:

(3) Կողմերը հավաստում են, որ Հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահին միակ պարտականությունը Պայմանագրով սահմանված Ծառայությունների Գնի՝ _____ ՀՀ դրամի վճարման պարտականությունն է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	**«ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Նորք-Մարաշ թղմ., Կորյունի փող., 7/1 շ., 29 բն.
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ	«Արցախբանկ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 22317000169500
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 01574226
_____ **Ա. Հովակիմյան**	_____ **Է. Սիմոնյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)